Քաղաքացի Գեղեցիկ Միշայի Հովհաննիսյանին պատկանող 07-065-0016-0006 կադաստրային ծածկագրով 0.10հա բնակելի կառուցապատման հողամասին (սեփականության վկայական թիվ 2329698) տրամադրել Ե. Զարենցի 9-րդ փողոց, թիվ 5 հասցեն:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱ

ԱՐԱ ՄԿՐՏՁՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 461

ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, ինչպես նաև քաղաքացի Արտաշես Թովմասյանի դիմումը՝ որոշում եմ


1. Բավարարել քաղաքացի Արտաշես Սերյոժայի Թովմասյանի դիմումը, հաստատել Գ. Նժդեհի փողոց թիվ 7/1 հասցեում 12.02.2020 թ. հաստատված նախագծի փոփոխությունները:
2. Հանձնարարել Քասախի համայնքապետարանի առաջատար մասնագետ Գ. Սիմոնյանին նախապատրաստել և համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել «Քաղաքաշինության մասին» օրենքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:
3. Պահանջել քաղաքացի Արտաշես Սերյոժայի Թովմասյանից շինարարական աշխատանքներն իրականացնել միայն անհրաժեշտ նախագծի և շինարարության թույլտվության անկայության դեպքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

2020թ. հուլիսի 28
գ. Քասախ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasmakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 462

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ և ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴԻՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 4 դրական եզրակացությունը, Քասախ համայնքի ավագանու 2017թվականի փետրվարի 15-ի թիվ 9 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի որոշում են

1. Քաղաքացի Սուրեն Գագիկի Հակոբյանին պատկանող 07-065-0307-0250 կադաստրային ծածկագրով 0.01 հա գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի ջրովի վարելահողի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողատեսքի:
2. Սահմանել, որ քաղաքացու սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոփոխված՝ կադաստրային արժեքի տարբերության վճարումից հետո, եթե հողամասերի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրանց կադաստրային արժեքն ավելի բարձր է քան՝ մինչև փոփոխումը, իրավունքների գրանցման պահից:
3. 0.01 հա հողամասին տրամադրել Վ. Տերյան 13-րդ փողոց թիվ 16/1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ



2020թ. հուլիսի 28
գ. Քասախ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


29 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 463

ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի, ինչպես նաև Քասախ համայնքի ավագանու 2001 թվականի հոկտեմբերի 9-ի N 13 որոշմամբ և հիմք ընդունելով Արայիկ Սառաֆի Սահակյանի դիմումը՝ որոշում էմ

Քաղաքացիներ Արայիկ Սառաֆի, Այա Մելիքի, Հերմինե Արայիկի Սահակյաններին պատկանող 07-065-0009-0022 կադաստրային ծածկագրով 0.1հա հողամասից (սեփականության վկայական թիվ 16062020-07-0206) առանձնացվող 353.87քմ հողամասին՝ ըստ հողամասի բաժանման հատակագծի թիվ 2 բաժանվող մասին տրամադրել Ա.Հարությունյան 6-րդ փողոց թիվ 8/2 հասցեն, իսկ մնացած 646.13քմ հողամասին՝ ըստ հողամասի բաժանման հատակագծի թիվ 1 բաժանվող մասի հասցեն թողնել նույն Ա.Հարությունյան 6-րդ փողոց թիվ 8 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru


Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2020 թվականի N 464

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշումը, ինչպես նաև քաղաքացի Հովհաննես Թորոսյանի դիմումը՝ որոշում եմ

Բավարարել քաղաքացի Հովհաննես Խաչիկի Թորոսյանի դիմումը և տրամադրել Երիտասարդական փողոց թիվ 24 հասցեում բնակելի տան, օժանդակ շինությունների և պարսպի կառուցման նախագծման թույլտվություն:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru


Ո Ր Ո Շ ՈՒ Մ
29 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 465

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշումը, ինչպես նաև քաղաքացի Հարություն Հարությունյանի դիմումը՝ որոշում եմ

Բավարարել քաղաքացի Հարություն Համլետի Հարությունյանի դիմումը և տրամադրել Մուշ 4-րդ փողոց թիվ 13/2 հասցեում բնակելի տան և պարսպի կառուցման նախագծման թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐԱ ՄԿՐՏՁՅԱՆ

2020թ. հուլիսի 29
գ. Քասախ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 466

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, ինչպես նաև քաղաքացիներ Արթուր Քուշքյանի և Աղեյինա Մելքոնյանի դիմումը՝ որոշում եմ

1. Բավարարել քաղաքացիներ Արթուր Ֆերդինանտի Քուշքյանի և Աղեյինա Ռոբերտի Մելքոնյանի դիմումը և տրամադրել Մուշ 6-րդ փողոց թիվ 16 հասցեի հողամասում իրականացնել բնակելի տան, օժանդակ շինությունների և պարսպի կառուցման աշխատանքներ, տրամադրել շինարարության թույլտվություն:

2. Հանձնարարել Քասախի համայնքապետարանի առաջատար մասնագետին նախապատրաստել և համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել «Քաղաքաշինության մասին» օրենքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

3. Պահանջել քաղաքացիներ Արթուր Ֆերդինանտի Քուշքյանից և Աղեյինա Ռոբերտի Մելքոնյանից, շինարարական աշխատանքներն իրականացնել միայն անհրաժեշտ նախագծի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

2020թ. հուլիսի 29
գ. Քասախ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 467

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, ինչպես նաև քաղաքացի Ենոք Հովհաննիսյանի դիմումը՝ որոշում եմ

1. Բավարարել քաղաքացի Ենոք Խանակի Հովհաննիսյանի դիմումը և տրամադրել Վ. Սարգսյան 1-ին փողոց թիվ 12 և12/1 հասցեների հողամասում իրականացնել բնակելի տան կառուցման աշխատանքներ, տրամադրել շինարարության թույլտվություն:

2. Հանձնարարել Քասախի համայնքապետարանի առաջատար մասնագետին նախապատրաստել և համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել «Քաղաքաշինության մասին» օրենքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

3. Պահանջել քաղաքացիներ Ենոք Խանակի Հովհաննիսյանից, շինարարական աշխատանքներն իրականացնել միայն անհրաժեշտ նախագծի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:



ԱՐԱ ՄԿՐՏՅԱՆ

2020թ. հուլիսի 30
գ. Քասախ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
22, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒԼԻՄԻ 2020թվականի N 468

**ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉՆԵՐԿԱՑԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ
ՆՇԱՆԱԿԱԼԵՈՒ ՄԱՍԻՆ**

Քասախ համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 4 վարչական գործը՝ Քասախ համայնքի, Աշտարակի խճուղի 20 հասցեում գրանցված «ՌԱԶԱՐ» ՍՊԸ-ի կողմից գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմին սահմանված ժամկետում չներկայացնելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ

«ՌԱԶԱՐ» ՍՊԸ-ն (հաշվառված՝ Աշտարակի խճուղի 20 հասցեում /ՀՎՀՀ՝ 03307645) հանդիսանալով Քասախ համայնքի համայնքի վարչական սահմաններում գտնվող շինության սեփականատեր՝ «Գույքահարկի մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն գույքահարկ վճարող սուբյեկտ, խախտելով «Գույքահարկի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, պահանջները՝ սահմանված եղանակներով չի ներկայացրել գույքահարկի կիսամյակային հաշվարկները, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով, ինչի կապակցությամբ Քասախի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 22.07.2020թ.. տրված հիշեցման թերթիկի հիման վրա 2020 թվականի հուլիսի 30-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169 հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Քասախի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է լսում «ՌԱԶԱՐ» ՍՊԸ-ի ներկայացուցչի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացրել լսմանը:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

«ՌԱԶԱՐ» ՍՊԸ-ն տեղական ինքնակառավարման մարմին չի ներկայացրել կազմակերպության 2018թվականի 1-ին, 2-րդ, 2019 թվականի 1-ին 2-րդ և 2020 թվականի 1-ին կիսամյակների գույքահարկի հաշվարկները, չնայած Քասախի համայնքապետարանի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից ուղարկված 22.07.2020թ. հիշեցման /հիմք՝ փոստային հավաստագիր առ 22.07.2020թ. RG007783585AM /:

Հանձնաժողովի՝ 30.07.2020թ.-ի վարչական տույժ նշանակելու վերաբերյալ թիվ 4 արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

1. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ գույքհարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի համաձայն «ՌԱԶԱՐ» ՍՊԸ-ն Քասախ համայնքի վարչական սահմաններում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող գույք, ուստի հիմք ընդունելով նույն օրենքի 8-րդ հոդվածը և Հարկային օրենսգիրքը պարտավոր է ներկայացնել հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունների համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը:

Գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝

1) հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների մասով՝ իրենց գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2020 թվականի հուլիսի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Քասախի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2020 թվականի հուլիսի 20-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 22.07.2020թ.-ի փոստային հավաստագիր RG007783585AM/

«ՌԱԶԱՐ» ՍՊԸ-ն:

Վերջինս, պատշաճ ծանուցված լինելով վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը վարչական վարույթի լսմանը: Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել մասնակից «ՌԱԶԱՐ» ՍՊԸ-ին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք, գույքահարկի և հողի հարկի հաշվարկները սահմանված ժամկետում չներկայացնելու համար՝ յուրաքանչյուրի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝ հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169¹ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարագիրը կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Տվյալ պարագայում «ՌԱԶԱՐ» ՍՊԸ-ի կողմից Քասախի համայնքապետարան չեն ներկայացվել գույքահարկի հաշվետվություններ:

Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169¹ հոդվածի 2-րդ մասի «Գույքահարկի մասին» օրենքի 9-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին 53-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների որոշում են՝



1. «ՌԱԶԱՐ» ՍՊԸ -ից հօգուտ Քասախի համայնքի բյուջեի գանձել 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ, որպես 2018 թվականի 1-ին և 2-րդ, 2019 թվականի 1-ին և 2-րդ, 2020 թվականի 1-ին կիսամյակների գույքահարկի հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելու համար նշանակված տուգանք:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Քասախի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացվում է Քասախի համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՄԿՐՏՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
22, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 469

**ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉՆԵՐԿԱՑԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ
ՆՇԱՆԱԿԱԼԵՈՒ ՄԱՍԻՆ**

Քասախ համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 3 վարչական գործը՝ Քասախ համայնքի, Արաբկիրի փողոց 26/1 հասցեում գրանցված «ՌՌԻԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմին սահմանված ժամկետում չներկայացնելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ

«ՌՌԻԲԱԼ» ՍՊԸ-ն (հաշվառված՝ Արաբկիրի փողոց 26/1 հասցեում /ՀՎՀՀ՝ 03545743) հանդիսանալով Քասախ համայնքի համայնքի վարչական սահմաններում գտնվող շինության սեփականատեր՝ «Գույքահարկի մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն գույքահարկ վճարող սուբյեկտ, խախտելով «Գույքահարկի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, պահանջները՝ սահմանված եղանակներով չի ներկայացրել գույքահարկի կիսամյակային հաշվարկները, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169¹-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով, ինչի կապակցությամբ Քասախի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 22.07.2020թ.. տրված հիշեցման թերթիկի հիման վրա 2020 թվականի հուլիսի 30-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169 հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Քասախի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է լսում «ՌՌԻԲԱԼ» ՍՊԸ-ի ներկայացուցչի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել լսմանը:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

«ՌՌԻԲԱԼ» ՍՊԸ-ն տեղական ինքնակառավարման մարմին չի ներկայացրել կազմակերպության 2019 թվականի 2-րդ և 2020 թվականի 1-ին կիսամյակների գույքահարկի հաշվարկները, չնայած Քասախի համայնքապետարանի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից ուղարկված 22.07.2020թ. հիշեցման /հիմք՝ փոստային հավաստագիր ստ 22.07.2020թ. RG007783554AM/: Հանձնաժողովի՝ 30.07.2020թ.-ի վարչական տույժ նշանակելու վերաբերյալ թիվ 3 արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

1. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ գույքհարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի համաձայն «ՌՌԻԲԱԼ» ՍՊԸ-ն Քասախ համայնքի վարչական սահմաններում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող գույք, ուստի հիմք ընդունելով նույն օրենքի 8-րդ հոդվածը և Հարկային օրենսգիրքը պարտավոր է ներկայացնել հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունների համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը:

Գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝

- 1) հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին.
- 2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների մասով՝ իրենց գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2020 թվականի հուլիսի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Քասախի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2020 թվականի հուլիսի 20-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 22.07.2020թ.-ի փոստային հավաստագիր RG007783554AM/ «ՌՌԻԲԱԼ» ՍՊԸ-ն:

Վերջինս, պատշաճ ծանուցված լինելով վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը վարչական վարույթի լսմանը: Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել մասնակից «ՌՌԻԲԱԼ» ՍՊԸ-ին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք, գույքահարկի և հողի հարկի հաշվարկները սահմանված ժամկետում չներկայացնելու համար՝ յուրաքանչյուրի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝ հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169¹ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարագիրը կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Տվյալ պարագայում «ՌՌԻԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից Քասախի համայնքապետարան չեն ներկայացվել գույքահարկի հաշվետվություններ:

Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169¹ հոդվածի 2-րդ մասի, «Գույքահարկի մասին» օրենքի 9-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին 53-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների որոշում էմ՝

1.«ՌՌԻԲԱԼ» ՍՊԸ -ից հօգուտ Քասախի համայնքի բյուջեի գանձել 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ, որպես 2019 թվականի 2-րդ և 2020 թվականի 1-ին կիսամյակների գույքահարկի հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելու համար նշանակված տուգանք:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Քասախի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացվում է Քասախի համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՔԱՍԱԽ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
Կոտայքի մարզ, գ. Քասախ, Հեռ. (098) 44-03-24, (093) 08-07-06, kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 470

**ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉՆԵՐԿԱՑԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ
ՆՇԱՆԱԿԱԼԵՈՒ ՄԱՄԻՆ**

Քասախ համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 2 վարչական գործը՝ Քասախ համայնքի, Վարդանանց փողոց տուն 13 հասցեում գրանցված «Փրկարար» ՍՊԸ-ի կողմից գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմին սահմանված ժամկետում չներկայացնելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ

«Փրկարար» ՍՊԸ-ն (հաշվառված՝ Վարդանանց փողոց տուն 13 հասցեում /ՀՎՀՀ՝ 00140608) հանդիսանալով Քասախ համայնքի համայնքի վարչական սահմաններում գտնվող շինության և հողամասի սեփականատեր՝ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Հողի հարկի մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն գույքահարկ ու հողի հարկ վճարող սուբյեկտ, խախտելով «Գույքահարկի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հողի հարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի պահանջները՝ սահմանված եղանակներով չի ներկայացրել գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվարկները, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169¹-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով, ինչի կապակցությամբ Քասախի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 22.07.2020թ.. տրված հիշեցման թերթիկի հիման վրա 2020 թվականի հուլիսի 30-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169 հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Քասախի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման

հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) իրավիք է և ~~անցկացրել է~~ լսում «Փրկարար» ՍՊԸ-ի ներկայացուցչի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել լսմանը: Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը:

«Փրկարար» ՍՊԸ-ն տեղական ինքնակառավարման մարմին չի ներկայացրել կազմակերպության 2015 թվականի 1-ին, 2-րդ, 2016 թվականի 1-ին, 2-րդ, , 2017 թվականի 1-ին, 2-րդ, , 2018 թվականի 1-ին, 2-րդ կիսամյակների գույքահարկի և հողի հարկի հաշվարկները, չնայած Քասախի համայնքապետարանի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից ուղարկված 22.07.2020թ. հիշեցման /հիմք՝ փոստային հավաստագիր առ 22.07.2020թ. RG007783599AM/: Հանձնաժողովի՝ 30.07.2020թ.-ի վարչական տույժ նշանակելու վերաբերյալ թիվ 2 արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

1. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի համաձայն «Փրկարար» ՍՊԸ-ն Քասախի համայնքի վարչական սահմաններում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող գույք, ուստի հիմք ընդունելով նույն օրենքի 8-րդ հոդվածը և Հարկային օրենսգրքը պարտավոր է ներկայացնել հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունների համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը:

Գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝

- 1) հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին.
- 2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների մասով՝ իրենց գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2. 01.07.2016թ. հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի համաձայն «Փրկարար» ՍՊԸ-ն Քասախի համայնքի վարչական սահմաններում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքներ, ուստի հիմք ընդունելով նույն օրենքի 12-րդ հոդվածը և Հարկային օրենսգրքը պարտավոր է ներկայացնել հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունների համար հողի հարկի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հողի հարկ վճարող կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմնի հաստատած ձևով հողի հարկի հաշվարկները «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ»

կետով սահմանված եղանակներով ներկայացնում են հողամասի գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2020 թվականի հուլիսի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Քասախի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2020 թվականի հուլիսի 20-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 22.07.2020թ.-ի փոստային հավաստագիր RG007783599AM/ «Փրկարար» ՍՊԸ-ն:

Վերջինս, պատշաճ ծանուցված լինելով վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը վարչական վարույթի լսմանը: Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել մասնակից «Փրկարար» ՍՊԸ-ին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք, գույքահարկի և հողի հարկի հաշվարկները սահմանված ժամկետում չներկայացնելու համար՝ յուրաքանչյուրի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝ հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

Համաձայն «Հողի հարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի՝ կազմակերպությունների համար հողի հարկի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հողի հարկ վճարող կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմնի հաստատած ձևով հողի հարկի հաշվարկները «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են հողամասի գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169¹ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարագիրը կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Տվյալ պարագայում «Փրկարար» ՍՊԸ-ի կողմից Քասախի համայնքապետարան չեն ներկայացվել գույքահարկի և հողի հարկի հաշվետվություններ:

Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169¹ հոդվածի 2-րդ մասի, «Գույքահարկի մասին» օրենքի 9-րդ հոդվածի, «Հողի հարկի մասին» 13-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին 53-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների որոշում են՝


1. «Փրկարար» ՍՊԸ -ից հոգուտ Քասախ համայնքի բյուջեի գանձել 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ, որպես հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելու համար նշանակված տուգանք, որից 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամը՝ 2015 թվականի 2-րդ, 2016 թվականի 1-ին և 2-րդ, 2017 թվականի 1-ին և 2-րդ, 2018 թվականին 1-ին կիսամյակների գույքահարկի հաշվարկի տուգանք և 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամը՝ 2015 2-րդ, 2016 թվականի 1-ին և 2-րդ, 2017 թվականի 1-ին և 2-րդ, 2018 թվականին 1-ին կիսամյակների հողի հարկի հաշվարկի տուգանք:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Քասախ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացվում է Քասախ համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՄԿՐՏՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
Կոտայքի մարզ, գ. Քասախ, Հեռ. (098) 44-03-24, (093) 08-07-06, kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2020 թվականի N 471

ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉՆԵՐԿԱՑԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԱԼԵՈՒ ՄԱՍԻՆ

Քասախ համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 1 վարչական գործը՝ Քասախ համայնքի, Աշտարակի խճուղի 6 հասցեում գրանցված «ԹՐԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ-ի կողմից գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմին սահմանված ժամկետում չներկայացնելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ

«ԹՐԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ-ն (հաշվառված՝ Աշտարակի խճուղի 6 հասցեում /պետ. ռեգիստրի գրանցման համար՝ 01 Ա 018396, ՀՎՀՀ՝ 02207942) հանդիսանալով Քասախ համայնքի համայնքի վարչական սահմաններում գտնվող շինության և հողամասի սեփականատեր՝ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Հողի հարկի մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն գույքահարկ ու հողի հարկ վճարող սուբյեկտ, խախտելով «Գույքահարկի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հողի հարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի պահանջները՝ սահմանված եղանակներով չի ներկայացրել գույքահարկի և հողի հարկի կիսամյակային հաշվարկները, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169¹-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով, ինչի կապակցությամբ Քասախի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 22.07.2020թ.. տրված հիշեցման թերթիկի հիման վրա 2020 թվականի հուլիսի 30-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169¹ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Քասախի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով)

իրավիքել և անցկացրել է լսում «ԹՐԵՔ USՈՊ» ՍՊԸ-ի ներկայացուցչի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել լսմանը:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փոստերը.

«ԹՐԵՔ USՈՊ» ՍՊԸ-ն տեղական ինքնակառավարման մարմին չի ներկայացրել կազմակերպության 2019 թվականի 1-ին, 2-րդ, 2020 թվականի 1-ին կիսամյակների գույքահարկի և հողի հարկի հաշվարկները, չնայած Քասախի համայնքապետարանի բյուջետային մուտքերի սպասնովման բաժնի կողմից ուղարկված 22.07.2020թ. հիշեցման /հիմք՝ փոստային հավաստագիր առ 22.07.2020թ. RG007783571AM/:

Հանձնաժողովի՝ 30.07.2020թ.-ի վարչական տույժ նշանակելու վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

1. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ գույքհարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի համաձայն «ԹՐԵՔ USՈՊ» ՍՊԸ-ն Քասախի համայնքի վարչական սահմաններում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող գույք, ուստի հիմք ընդունելով նույն օրենքի 8-րդ հոդվածը և Հարկային օրենսգիրքը պարտավոր է ներկայացնել հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ: «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունների համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը: Գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝

- 1) հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին.
- 2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների մասով՝ իրենց գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2. 01.07.2016թ. հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի համաձայն «ԹՐԵՔ USՈՊ» ՍՊԸ-ն Քասախի համայնքի վարչական սահմաններում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքներ, ուստի հիմք ընդունելով նույն օրենքի 12-րդ հոդվածը և Հարկային օրենսգիրքը պարտավոր է ներկայացնել հաշվարկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունների համար հողի հարկի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հողի հարկ վճարող կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմնի հաստատած ձևով հողի հարկի հաշվարկները «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ»

կետով սահմանված եղանակներով ներկայացնում են հողամասի գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

2020 թվականի հուլիսի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Քասախի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2020 թվականի հուլիսի 20-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 22.07.2020թ.-ի փոստային հավաստագիր RG007783571AM/ «ԹԲԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ-ն:

Վերջինս, պատշաճ ծանուցված լինելով վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը վարչական վարույթի լսմանը: Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել մասնակից «ԹԲԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ-ին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք, գույքահարկի և հողի հարկի հաշվարկները սահմանված ժամկետում չներկայացնելու համար՝ յուրաքանչյուրի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝ հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

Համաձայն «Հողի հարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի՝ կազմակերպությունների համար հողի հարկի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հողի հարկ վճարող կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմնի հաստատած ձևով հողի հարկի հաշվարկները «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են հողամասի գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարագիրը կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Տվյալ պարագայում «ԹԲԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ-ի կողմից Քասախի համայնքապետարան չեն ներկայացվել գույքահարկի և հողի հարկի հաշվետվություններ:

Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169¹ հոդվածի 2-րդ մասի, «Գույքահարկի մասին» օրենքի 9-րդ հոդվածի, «Հողի հարկի մասին» 13-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին 53-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների որոշում եմ՝

1. «ԹՐԵՔ ՍՏՈՊ» ՍՊԸ -ից հոգուտ Քասախահամայնքի բյուջեի գանձել 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ, որպես հաշվարկները տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելու համար նշանակված տուգանք, որից 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամը՝ 2019 թվականի 1-ին 2-րդ կիսամյակին 2020 թվականի առաջին կիսամյակների գույքահարկի հաշվարկի տուգանք և 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամը՝ 2019 թվականի 1-ին 2-րդ կիսամյակի և 2020 թվականի առաջին կիսամյակների հողի հարկի հաշվարկի տուգանք:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Քասախ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացվում է Քասախ համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՔՏԻՍՅԱՆ